Տ. ՏԱՃԱՏ ԱԲԵՂԱ ԾԱՏՈՒՐՅԱՆ
(ավագանի անունը՝ Մեր)

Ծնվել է 1975 թվականի դեկտեմբերի 5-ին Արմավիրի մարզի Արմավիր քաղաքում:

1982-1992 թթ. սովորել է տեղի համար 8 միջնակարգ դպրոցում:

1993 թթ. սովորել է Շիրակի թեմի Հոգևոր Ընծայարանում:

1996-2002 թթ. սովորել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում:

2001 թվականի դեկտեմբերի 25-ին, ձեռամբ Տ. Միքայել եպս. Աջապահյանի, ձեռնադրվել է սարկավագ:

Գևորգյան Հոգևոր Ճեմարանն ավարտելուց հետո, 2002 թվականի հուլիսի 6-ին, աշխատանքի է անցել Վեհարանում՝ որպես գործավար-քարտուղար:

2003 թվականի փետրվարի 20-ին պաշտպանել է ավարտաճառ՝ «Գրիգոր Խլաթեցու «Բնագրական նշմարների» լեզուն հայերենի պատմական զարգացման կտրվածքով» թեմայով:

2003 թվականի փետրվարի 27-ին՝ Ս. Վարդանանց տոնին, ձեռամբ Գերաշնորհ Տ. Պարգև արքեպս. Մարտիրոսյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա: